ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

30 հուլիսի 2018 թվականի N 98-Ա

Ա. ՄԱԴԱԹՅԱՆԻՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 34-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Ջրաբերի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի 2018 թվականի հուլիսի 20-ի N 107 արձանագրությունը *(որոշումը)* **կարգադրում եմ.**

1. ***Անահիտ Սամվելի Մադաթյանին*** 2018 թվականի հուլիսի 30-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Ջրաբերի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ *նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:*

2. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2018 թվականի մայիսի 2-ի *«Ա. Հայրապետյանին տնօրենի պաշտոնից ազատելու մասին»* N 33-Ա կարգադրության 2-րդ կետը:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թվականի հուլիսի 30
ք. Հրազդան